ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-08/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.02.2014թ. N 1/13.1/2765-14 և 24.03.2014թ. N 13.1/6715-14 գրություններով «Հալալ Միս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-08/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-08/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.12.2014թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.02.2014թ. N 1/13.1/2765-14 և 24.03.2014թ. N 13.1/6715-14 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Հալալ Միս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Հալալ Միս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 05.03.2014թ. N 09/032-404 և 07.05.2014թ. N 09/032-803 գրություններով դիմել է «Հալալ Միս» ՍՊԸ-ին:

«Հալալ Միս» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարության 24.02.2014թ. N 1/13.1/2765-14 գրության վերաբերյալ պատասխան չի ներկայացրել, իսկ նախարարության 24.03.2014թ. N 13.1/6715-14 գրության կապակցությամբ իր 18.03.2014թ. գրությամբ հայտնել է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/69-7» ծածկագրով 09.01.2014թ. կնքված պայմանագրով 03.03.2014թ. Ընկերության կողմից մանկապարտեզներին մատակարարվել է ապրանք, սակայն մանկապարտեզներից մեկի կողմից առանց որևէ պատճառաբանության և հիմնավորման մատակարարված ապրանքը չի ընդունվել և պայմանագիրը միակողմանի լուծվել է, ինչը չի համապատասխանում այդ պայմանագրով սահմանված դրույթներին:

ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2014թ. N 13.1/6715-14 գրության վերաբերյալ Ընկերությունն իր 18.06.2014թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է նաև, որ Ընկերությունը «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին մատակարարել է կնքված պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխ-նիկական բնութագրի պահանջներին համապատասխանող ապրանք:

«Հալալ Միս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-08/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել 16.12.2014թ. ժամը 16:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 25.03.2014թ. N 011/032-545 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով կարծիք տալ ՀՀ ֆինանսների նախարարության 24.02.2014թ. N 1/13.1/2765-14 գրությամբ «Հալալ Միս» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանը 04.04.2014թ. N 02/61-17914h գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և «Հալալ Միս» ՍՊԸ-ի միջև 09.01.2014թ. կնքված սննդամթերքի ձեռքբերման «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/69-7» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է 14.02.2014թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ և պայմանագրի 3.1.7.1 կետերի հիմքով:

Երևանի քաղաքապետարանն Ընկերության 18.03.2014թ. գրության վերաբերյալ հայտնել է, որ Պայմանագրի միակողմանի լուծման հանգամանքը պայմանավորված է եղել նրանով, որ Ընկերության կողմից մատակարարված «տավարի միս» սննդամթերքը չի համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին և այն չի փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում, որն էլ Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն համարվում է էական խախտում և հիմք է հանդիսանում պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

Ինչ վերաբերում է նրան, որ Ընկերության կողմից մատակարարված ապրանքը մանկապարտեզներից մեկի կողմից առանց որևէ պատճառաբանության և հիմնավորման չի ընդունվել և պայմանագիրը միակողմանի լուծվել է, ապա Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ Ընկերությունը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք, այսինքն՝ գրությամբ բարձրացված պահանջները հիմնավորված չեն և չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, ուստի Երևանի քաղաքապետարանի կողմից չեն կարող ընդունվել:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-08/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել 16.12.2014թ. ժամը 16:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 13.05.2014թ. N 04/032-841 գրությամբ դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ ՀՀ

ֆինանսների նախարարության 24.03.2014թ. N 13.1/6715-14 գրությամբ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 30.05.2014թ. N 0-199 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ տավարի միս ձեռք բերելու նպատակով «Հալալ Միս» ՍՊԸ-ի և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի միջև 14.01.2014թ. կնքվել է «ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2-14/2» ծածկագրով պայմանագիրը, որի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին համապատասխանող ապրանք: «Հալալ Միս» ՍՊԸ-ի կողմից 06.02.2014թ. և 17.03.2014թ. մատակարարված ապրանքը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչի արդյունքում Ընկերության հետ կնքված վերոնշյալ պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է:

Այնուհետև, «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 03.11.2014թ. N 0-403 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման արդյունքում հաշվարկած 66700 ՀՀ դրամ տուգանքը և 666900 ՀՀ դրամ տուժանքն Ընկերության կողմից չեն վերականգնվել:

Պատվիրատուի ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում 16.12.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկմանը, պնդեց 30.05.2014թ. N 0-199 և 03.11.2014թ. N 0-403 գրություններով հայտնած դիրքորոշումը:

5. ՍՑ-ԳԲԽ-08/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.12.2014թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 24.02.2014թ. N 1/13.1/2765-14 և 24.03.2014թ. N 13.1/6715-14 գրություններով «Հալալ Միս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը

կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

6. ՍՑ-ԳԲԽ-08/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 24.02.2014թ. թիվ 1/13.1/2765-14 և 24.03.2014թ. թիվ 13.1/6715-14 գրություններով «Հալալ Միս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

Առաջին, Երևանի քաղաքապետարանի և «Հալալ Միս» ՍՊԸ-ի միջև 09.01.2014թ. կնքվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/69-7» ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1), որով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ոչ ուշ, քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

- Պայմանագիր 1-ի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է, որ «տավարի միս՝ տեղական, փափուկ» ապրանքատեսակն անհրաժեշտ է մատակարարել շաբաթական կտրվածքով:
- Պայմանագիր 1-ի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահ-մանվել է, որ «տավարի միս՝ տեղական, փափուկ» ապրանքատեսակը նախա-տեսվում է գնել 2014 թվականին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Երևանի Արաբկիր վարչական շրջանի ենթակայությամբ գործող թվով 13 մանկապարտեզների համար:
- Երևանի Արաբկիր վարչական շրջանի ենթակայությամբ գործող վերը նշված մանկապարտեզներից 9-ի կողմից կազմվել են մատակարարված ապրանքի որակը տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու վերաբերյալ արձանագրություններ, մասնավորապես՝

✓ «Երևանի հ. 22 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի թիվ 1 արձանագրության համաձայն՝ 03.02.2014թ. ժամը 14:30-ին «Հալալ Միս» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է

20կգ. միս, որը տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է: Թիվ 2 արձանագրության համաձայն՝ 17.02.2014թ. ժամը 12:50-ին «Հալալ Միս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված 20կգ. միսը վերադարձվել տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով (մսի տեսքը սևացած էր և հոտ էր գալիս): Նշվել է նաև, որ միսը վերադարձնելուց հետո Ընկերությունը հրաժարվել է այն ժամանակին առաքել:

✓ «Երևանի հ. 26 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 18.02.2014թ. արձանագրության համաձայն՝ 09.01.2014թ.-ից մինչ օրս Ընկերության կողմից «տավարի միս՝ տեղական, փափուկ» ապրանքատեսակը մատակարարվել է ընդամենը մեկ անգամ 4կգ., այն դեպքում, երբ միսն ամեն շաբաթ պատվիրվել է:

✓ «Երևանի հ. 29 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 03.03.2014թ. կազմված արձանագրության համաձայն՝ այդ օրը «Հալալ Միս» ՍՊԸ-ն մանկապարտեզին մատակարարել է 8կգ. «տավարի միս՝ տեղական, փափուկ» ապրանք, որը չի համապատասխանել կնքված պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնու-թագրով, սահմանված պահանջներին (գույնը մուգ էր, մսի մեջ կաշվե, ջլային և յուղային հարաբերությունը գերակշռում էր), ուստի պահանջվել է մատակարարված ապրանքը փոխել, սակայն Ընկերությունը հրաժարվել է այդ պահանջը կատարել:

✓ «Երևանի հ. 30 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 17.02.2014թ. արձանագրության համաձայն՝ 17.02.2014թ. Ընկերությունը մատակարարել է 15 կգ. տավարի միս, որը չի համապատասխանել պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրին: Մսի որակը ստուգելու համար ստեղծվել է հանձնաժողով: Պարզվել է, որ մատակարարված միսը եղել է շատ մուգ, տեղ-տեղ սևացած, բարակ յուղային կաշվե շերտերի մեծ հատվածներ, որոնք ենթակա չեն եղել օգտագործման: «Հալալ Միս» ՍՊԸ-ին հանձնարարվել է երեք ժամվա ընթացքում մատակարարված միսը փոխարինել տեխնիկական բնութագրին համապատասխան մսով, սակայն վերջինիս կողմից այդ պահանջը չի կատարվել:

✓ «Երևանի հ. 32 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 05.02.2014թ. արձանագրու-թյան համաձայն՝ 31.01.2014թ. պատվիրված 30կգ. միսն Ընկերության կողմից մատակա-րարվել է 2014թ. փետրվարի 5-ին, ինչը չի համապատասխանել տեխնիկական բնութագրին և վերադարձվել է:

✓ «Երևանի հ. 34 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 05.02.2014թ. թիվ 1 արձանագրության համաձայն՝ տվյալ օրվա դրությամբ պատվիրված ապրանքն Ընկերության կողմից չի մատակարարվել, իսկ 06.02.2014թ. կազմված N 2 արձանագրությունում նշվել է, որ տվյալ օրը պահանջված միսը մատակարարվել է 1 օր ուշացումով, ինչը չի համապատասխանել տեխնիկական բնութագրին ու հետ է ուղարկվել: 10.02.2014թ. կազմված N 3 արձանագրության համաձայն՝ այդ օրը «Հալալ Միս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված 3կգ. միսը չի համապատասխանել կնքված պայմանագրի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագրին ու հետ է ուղարկվել: Նշվել է նաև, որ մատակարարը հրաժարվել է միսը փոխարինել կամ հաջորդ օրը մատակարարել պահանջին համապատասխան:

- Անասնաբուժական փորձաքննության 07.02.2014թ. N 010801 եզրակացության համաձայն՝ Արաբկիր վարչական շրջանում առկա մանկապարտեզներում մատակարարվող սննդամթերքի հսկողություն կատարելու ընթացքում, մատակարարված մսի որակը ստուգելու նպատակով, ս.թ. փետրվարի 5-ին մսի խմբաքանակից վերցրած նմուշները ՁԱԲԵՏԿ-ի սննդամթերքի անվտանգության լաբորատորիա են ներկայացվել անասնաբուժասանիտարական փորձաքննության հետազոտություններն իրականացնելու նպատակով և ըստ զգայաբանական, մանրադիտակային և ֆիզիկա-քիմիական հետազոտությունների արդյունքների՝ մսի նմուշներն ունեն կասկածելի թարմություն:

- Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետը, 14.02.2014թ. միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «Հալալ Միս» ՍՊԸ-ի միջև 09.01.2014թ. կնքված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/69-7» ծածկագրով պայմանագիրը:

Երկրորդ, «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Հալալ Միս» ՍՊԸ-ի միջև 14.01.2014թ. կնքվել է սննդամթերթի գնման ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2-14/2 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2), որով ապրանքի մատակարար-ման ժամկետ է սահմանվել մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը:

- Պայմանագիր 2-ի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման և վճարման ժամանակացույցով, սահմանվել է, որ 4500կգ. քանակության «Տավարի պաղեցրած միս» ապրանքատեսակն (այսուհետ նաև՝ Ապրանք) անհրաժեշտ է մատակարարել ամսական՝ ըստ փաստացի պահանջի:

• «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 22.01.2014թ. էլեկտրոնային եղանակով «Հալալ Միս» ՍՊԸ-ին խնդրել է մինչև 23.01.2014թ. մատակարարել 100կգ. Ապրանք, սակայն Ընկերությունը, խախտելով սահմանված ժամկետը, մատակարարումն իրականացրել է 24.01.2014թ.:

• «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրոնային եղանակով 01.02.2014թ. ուղարկված պատվերի համաձայն՝ Ընկերությունը մինչև 04.02.2014թ. պետք է մատակարարեր 100կգ. Ապրանք, սակայն Ընկերությունը, խախտելով սահմանված ժամկետը, տավարի պաղեցրած միսը (137կգ.) մատակարարել է 06.02.2014թ.-ին, ինչը պատվիրատուի կողմից չի ընդունվել, քանի որ Ապրանքը չի համապատասխանել Պայմանագիր 2-ի տեխնիկական բնութագրին: Որից հետո Ընկերությունը 11.02.2014թ. պատվիրատուին մատակարարել է 91կգ Ապրանք:

• Ընկերության կողմից 17.03.2014թ. մատակարարվել է 108 կգ. տավարի միս, ինչը պատվիրատուի կողմից չի ընդունվել, քանի որ կրկին մատակարարվել է պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանող Ապրանք:

• «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից 2014թ. մարտի 17-ին որոշում է կայացվել Ընկերության հետ 14.01.2014թ. կնքված սննդամթերթի գնման ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2-14/2 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

• «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 18.03.2014թ. N 0-89 գրությամբ «Հալալ Միս» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 14.01.2014թ. կնքված սննդամթերթի գնման ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2-14/2 պայմանագիրը՝ Ընկերության կողմից պայմանագիրն էակա-նորեն խախտելու հիմքով, 17.03.2014թ. միակողմանի լուծել է:

• «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 03.11.2014թ. 0-403 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով Ընկերության կողմից չեն վերա-կանգնվել 66.700 ՀՀ դրամ տուգանքը, ինչպես նաև տուժանքի մասին համա-ձայնությամբ սահմանված 666.900 ՀՀ դրամ տուժանքը:

7. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-08/14 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագիր 1-ի 3.1.7 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագիր 1-ի 3.1.7.1 կետի «ա» ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդու-նելի ժամկետում:

Պայմանագիր 1-ի 3.4.5 կետի համաձայն՝ վաճառողը պարտավոր է գնորդին (ստացողին) հանձնել պայմանագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետ-ներում, իսկ գնորդի (ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաս-տող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Պայմանագիր 2-ի 3.1.4 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակող-մանի լուծել նույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էակա-նորեն խախտել է նույն պայմանագիրը:

Պայմանագիր 2-ի 3.1.4.1 կետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմա-նագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխա-րինվել գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

Այսպիսով, Ընկերության կողմից վերոնշյալ պայմանագրերով ստանձնած պարտավորությունն ավելի քան մեկ անգամ խախտվել է՝ մատակարարվել է անպատ-շաճ որակի ապրանք, ինչը չի փոխարինվել պատվիրատուների համար ընդունելի ժամկետում և թույլ է տրվել մատակարարման ժամկետի խախտումներ:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից պայմանագրերով նախատեսված պարտավորությունն ավելի քան մեկ անգամ խախտվել է և վերոնշյալ խախտումները հանգեցրել են պատվիրատուների կողմից պայմանագրերի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը չի վերականգնվել, ուստի Խորհուրդը գտնում է, որ առկա են հիմքեր Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 24.02.2014թ. N 1/13.1/2765-14 և 24.03.2014թ. N 13.1/6715-14 գրություններով «Հալալ Միս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Հալալ Միս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Հալալ Միս» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Ենոքյան**

Անդամներ՝ **Էդուարդ Շախկյան**

Լեռնիկ Խաչատրյան